ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակաշրջանում իրավաբանական բաժնի կողմից իրականացվել է համայնքների կողմից մարզպետարան ներկայացված ավագանիների և համայնքների ղեկավարների որոշումների օրինականության ստուգում, որի արդյունքում հայտնաբերված խախտումները ուղղելու և թերությունները վերացնելու նպատակով պաշտոնական գրությամբ վերադարձվել է 17 համայնքների ավագանիների կողմից ընդունված 19 որոշում, և 1 համայնքների ղեկավարների կողմից ընդունված 1 որոշում: Բոլոր որոշումներում սահմանված կարգով կատարվել են փոփոխություններ և լրացումներ և ներկայացվել են մարզպետարան:

Օրենսդրական դաշտի և օրենսդրական տեխնիկայի կանոնների կիրարկումն ապահովելու նպատակով պարբերաբար տրամադրվել է խորհրդատվություն՝ մարզի համայնքների ղեկավարների և ավագանու որոշումների, մարզային ենթակայության հիմնարկների և ընկերությունների ղեկավարների կողմից ընդունված իրավական ակտերի ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու վերաբերյալ:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է մարզպետարանի աշխատակազմի վարչությունների և բաժինների կողմից նախապատրաստված մարզպետի որոշումների և կարգադրությունների նախագծերի ուսումնասիրություն և տրվել է իրավական ակտերին համապատասխանության վերաբերյալ եզրակացություններ:

Մարզխորհրդի նիստերում ներկայացվել է ՀՀ օրենքներում, ՀՀ կառավարության որոշումներում և այլ իրավական ակտերում կատարված փոփոխությունները և դրանցից բխող տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրները:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել և պատասխանվել է համայնքների բնակիչների կողմից մարզպետին ուղղված մի շարք դիմումների:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ Ա.ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
20.01.2014թ.